



Համարը N 417-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀԵԻՍ 2012.03.28/4(35) Հոդ.10
Ընդունող մարմինը Երևան քաղաքի ավագանի
Ստորագրող մարմինը Երևանի քաղաքապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 07.04.2012

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 16.03.2012
Ստորագրման ամսաթիվը 16.03.2012
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

16 մարտի 2012 թ.

N 417-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Երևան քաղաքի ավագանին **որոշում է՝**

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» N 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1. Որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-րդ կետով.

«11.1. Մեկից ավելի վարչական շրջաններում գովազդային գործունեություն իրականացնող գովազդակիրներին ուղղանկարների և համապատասխան փորձաքննության մոնիտինգային նախագծերի համաձայնեցման համար մինչև սույն կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով համապատասխան վարչական շրջան դիմում ներկայացնելը կարող են դիմել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն՝ ներկայացնելով գովազդային ուղղանկարների փաթեթները կամ գովազդային միջոցների նախագծերը: Ներկայացվող դիմումում պետք է նշվեն գովազդի տեղադիրը (հասցե) ըստ վարչական շրջանների, արտաքին չափերը, մակերեսը և տեղադրման ժամանակացույցը:»:

2. Որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 15-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Գովազդի ընթացիկ տեղադիրի փոփոխման պարագայում կազմակերպությունը պարտավոր է դրա մասին նախապես՝ առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչությանը:»:

3. Հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող փողոցներում կրկնաձիգ գրաժայթակների (տրանսպարանտ) միջոցով, բացառությամբ համապետական համաքաղաքային նշանակության միջոցառումների ազդարարման նպատակով կարճաժամկետ տեղադրման դեպքերի:»:

4. Հավելվածի 42-րդ կետը խմբագրել նոր հետևյալ բովանդակությամբ՝ «Էլեկտրոնային էկրաններ կարող են տեղադրվել շենքերի տանիքներին, շենքերի պատերի խուլ հատվածներին, վերգետնյա անցումների վրա, ճանապարհների կենտրոնական բաժանարար գոտիներում և խաչմերուկներում:

Էկրանային (վերարտադրող) սարքավորումների մակերեսը որոշվում է էկրանի վերարտադրվող պատկերի մակերեսով:

Էլեկտրոնային էկրանների տեղադրման համար սահմանվում են հետևյալ չափորոշիչները՝

ա) «Էլեկտրոնային էկրանի որևէ հատված չի կարող գտնվել ճանապարհի երթևեկելի մասի վրա, բացառությամբ վերգետնյա անցումների վրա տեղադրված էլեկտրոնային էկրանների:

բ) Յուրաքանչյուր խաչմերուկում չի կարող տեղադրվել 1-ից ավելի էլեկտրոնային վահանակ:

գ) Ցանկացած չափի էլեկտրոնային էկրանների միջև հեռավորությունը չի կարող պակաս լինել 200 մետրից:

դ) Էլեկտրոնային էկրանի յուրաքանչյուր տեղադիրի համար Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության կողմից սահմանվում են առանձին չափորոշիչներ՝ կապված բարձրության և տեղեկատու դաշտի մակերեսի հետ, որոնք հաշվի են առնում տվյալ տարածքի ճարտարապետական առանձնահատկությունները:»:

5. Որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 45.1-րդ կետով.

«45.1. Շենք-շինությունների ճակատային հատվածների վրա թույլատրելի գովազդի տեղադիրը, չափը, գունային լուծումը և գովազդի պատրաստման համար օգտագործվող նյութերը որոշվում են համաձայն՝ Երևանի քաղաքապետի կողմից հաստատված սխեմայի:»:

Երևանի քաղաքապետ

Տ. Մարգարյան